

1.2.2. **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ. հունվար-մայիսին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 66.5 մլրդ.դրամ,որը 2002թ. մակարդակը գերազանցել է 3.8%-ով: 2003թ. մայիսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է ապրիլի 160.7%-ը:

Հանրապետությունում ավարտին են մոտենում գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները:

2003թ. հունիսի 1-ի դրությամբ, նախնական տվյալներով, հանրապետությունում կատարվել է 112991 հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք, որը 2002թ. մակարդակը գերազանցում է 1883 հեկտարով, կամ 1.7%-ով:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի գարնանացանի ընթացքը հանրապետությունում 2003թ. հունիսի 1-ի դրությամբ

(*հեկտար*)

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել է		2002թ. նկատմամբ, %
	2003թ.	2002թ.	
Հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	58861	57308	102.7
Կարտոֆիլ	25276	24532	103.0
Բանջարանոցային մշակաբույսեր	18542	18130	102.3
Բոստանային մշակաբույսեր	2524	3085	81.8
Կերային մշակաբույսեր	6976	6811	102.4
Այլ մշակաբույսեր	812	1242	65.4
ԸՆԴԱՄԵՆՆ ԶԶ	112991	111108	101.7

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2003թ. հունիսի 1-ի դրությամբ

(*հաշվարկային տվյալներ*)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2003թ.	2002թ. նկատմամբ, %	2003թ.	2002թ. նկատմամբ, %	2003թ.	2002թ. նկատմամբ, %
ք.երևան	0.1	101.1	1.1	100.0	19.7	109.4
Արագածոտն	2.9	103.6	20.1	105.2	10.3	166.1
Արարատ	2.4	100.0	13.4	100.0	14.2	173.2
Արմավիր	3.1	147.6	11.6	104.5	14.6	175.9
Գեղարքունիք	4.5	104.7	31.5	100.0	14.4	180.0
Լոռի	2.7	103.8	20.8	103.5	9.2	209.1
Կոտայք	2.8	107.7	17.5	104.2	85.6	99.0
Շիրակ	3.8	105.6	26.2	107.4	13.5	166.7
Սյունիք	2.1	105.0	14.9	102.1	5.9	155.3
Վայոց ձոր	1.0	100.0	6.8	100.0	4.8	165.5
Տավուշ	2.2	104.8	12.4	100.0	7.2	118.0
ԸՆԴԱՄԵՆՆ ԶԶ	27.6	104.9	176.3	103.0	199.4	124.2

2003թ. հունվար-մայիսին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 1.3 հազ. տոննայով կամ 4.9%-ով, կաթի արտադրությունը՝ 5.1 հազ. տոննայով կամ 3.0%-ով, ձվինը՝ 38.9 մլն. հատով կամ 24.2%-ով:

¹ *Ներառյալ ներքին սպառումը:*